ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Տարրական դասարաններում գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Արևիկ Արզումանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Շինուհայրի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հերմինե Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Տարրական դասարաններում «Մայրենի» առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունն ու մեթոդները----------5

Գործնական աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում----7

Եզրակացություն----------18

Գրականություն----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մայրենի լեզվի դասավանդումն առանձնահատուկ բնույթ ունի տարրական դպրոցում:

Ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական ու գրական ճաշակի հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում:

Աճող սերնդի կրթվածությունը և արժեհամակարգի ձևավորվածությունը սերտորեն կապված է ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածությունից, գործնական աշխատանքների ճիշտ կազմակերպումից և հմտությունների որակից:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ցույց տալ, որ այսօր ուսուցչից պահանջվում է շարունակական ինքնակրթություն, մասնագիտական կարողությունների վերանայում ժամանակակից պահանջներին համապատասխան: Ուսուցման և ուսումնառության ընթացքի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական կարողությունների հմուտ կիրառումից և կոմպետենտության աստիճանից, գործընթացի ճիշտ պլանավորումը գործնական աշխատանքների կազմակերպումը, գիտելիքի փոխանցման, դրա ինքնուրույն ձեռքբերման ուղիների մատնանշումը:

Սովորողներին սովորել սովորեցնելու կարողությունը խոսում է մանկավարժական համակարգված գործնեության մասին:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին: Այդ աշխատանքներն նպաստում են խորացնելու կրտսեր դպրոցականների գիտելիքները, զարգացնում են նրանց ճանաչողական ակտիվությունը:

Հետազոտության տեսական նշանակությունն է վերլուծել, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Հետևաբար, աշակերտներին պետք է հասանելի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարում են ոչ միայն հանուն

գիտության, այլև հանուն պրակտիկ գործնեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Աշակերտը պետք է հասկանա և գիտակցի, թե որքան կարևոր են տեսական գիտելիքների իմացությունը մարդու պրակտիկ գործնեության մեջ :

Հետազոտության գործնական նշանակությունը նպաստում է, որ աշակերտը կարողանա մտածել կարդացածի շուրջ, առանձնացնել գլխավոր երկրորդականից, կատարել ինքնուրույն մտահանգումներ, եզրահանգումներ, եզրակացություններ:

Այսինքն, տեսական գիտելիքի գործնական կիրառումն է ստեղծագործական մոտեցմամբ: Գործնական աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անցկացումը <<Մայրենի>> առարկայից շատ կարևոր է , որովհետև այն ձևավորող գնահատման ձևերից մեկն է՝ Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 կարևոր կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Տարրական դասարաններում «Մայրենի» առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունն ու մեթոդները

Կրթական չափորոշչային պահանջներից բխող հետևությունն այն է, որ այսօր անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն արդյունքում տալիս է միանգամայն նոր, նրան անծանոթ գիտելիքներ կամ էլ ունեցած գիտելիքների խորացում:

Գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ընդգրկում են հետազոտական աշխատանքներ և նախագծային գործունեություն: Այդ աշխատանքները անցկացվում են թե՛ ստուգման, և թե՛ ուսուցման նպատակով /սովորողների ձեռք բերած գիտելիքները, կարողությունները, հմտությունները կարողանում են գործնականում կիրառել/:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

. ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,

. մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական ու գործնական նյութ,

. նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը>>:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի ՝ վերարտադրողական - սովորողը ինչ է սովորել և ինչ է կարողանում անել,

որոնողական – գիտելիքների և հմտությունների կիրառում սովորողի անծանոթ և փոփոխված միջավայրում,

ստեղծագործական – սովորողը ինքն պետք է ինքնուրույն կամ խմբի հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ներկայացնելով կարողունակությունների որոշակի մակարդակ:

Առաջադրանք – վերջնարդյունք – կարողություն

Յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունից ելնելով՝ գործնական աշխատանքներ իրականացվում են բոլոր առարկաներից ու ուսումնական գործընթացի բոլոր փուլերում: Գործնական աշխատանքը պետք է նպաստի ուսումնական ծրագրով նախատեսված վերջնարդյունքներին, կատարվելիք առաջադրանքը՝ նպաստի կարողունակությունների զարգացմանը :

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջներին համաձայն՝ մայրենիից տրվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

- պատմության գծապատկերի կազմում՝ նախադասություններ համար գունային բաժանումներով
- դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ ,
- բառերի, վանկերի կազմության գծապատկերներ,
- տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում,
- գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն,
- գովազդային վահանակ,
- տեքստի նկարազարդում,
- հեքիաթների հորինում, ինքնաշեն գրքերի նկարազարդում,
- զանազան տեղեկատվական աղբյուրներից որոնել, գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար և այլն:

Գործնական աշխատանքները 1-ին դասարանում

Ուսումնառության հենց առաջին օրերից սկսած կարևոր է, որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը: Որպես կանոն ուսման նկատմամբ անտարբեր երեխաները սովորում են շատ ավելի վատ, քան կարող են: Իսկ հետաքրքրասեր, հարցասեր երեխաները սովորում են շատ ավելի հեշտ և արագորեն են յուրացնում գիտելիքները:

Սա է պատճառը, որ երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտություններ ուսուցանելը առաջին դասարանում դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է:

Ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը:

Առաջին դասարանը գործնական կարողությունների զարգացման առաջին փուլն է: Գործնական աշխատանքն այս դասարանում կրում է սոսկ ուսուցանող բնույթ: Այս փուլում աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է երևակայության, ստեղծագործական մտածողության, դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը, որն էլ նպաստում է գործնական կարողությունների նպաստմանը: Հնարավոր չէ ձևավորել գործնական կարողություններ առանց երեխաների երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացման:Հատկապես այդ գործընթացն է մարդուն դուրս բերում իրականության սահմաններից և հնարավորություն է ստեղծում կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում:

Կան վարժությունների խմբեր, որոնք նպաստում են երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը.

. շարունակի՛ր անավարտ պատմվածքը, հեքիաթը,

. հորինի՛ր պատմվածք որևէ հերոսի անունից,

. նկարագրի՛ր քո երևակայական կյանքի մեկ օրը,

. որևէ առարկայի համար անվանի՛ր որքան հնարավոր է շատ հատկանիշներ,

. եկե՛ք միասին մտածենք, թե…,

. ինչու՞ են երեխաները սիրում խաղալ համակարգչային խաղեր և այլն

Գործնական վարժությունները ճանաչողական- հետազոտական և ստեղծագործական գործընթացների սկիզբն են: Արդեն առաջին դասարանից սովորողներին անհրաժեշտ է վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին՝

. մտածել ինքնուրույն,

. հարցնել մեկ ուրիշից,

. կարդալ գրքերում,

. հարցնել մեկ ուրիշից,

. տեղեկություններ ստանալ համացանցից,

. դիտարկումներ կատարել,

.հարցնել համապատասխան մասնագետներից:

Գործնական աշխատաքները 2 – 4 –րդ դասարաններում

Երկրորդ դասարանից սկսած արդեն կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ, որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից: Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն ,ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրած խնդիրը:

Գործնական աշխատանքները 2-4 –րդ դասարաններում նպաստում են ոչ միայն յուրացված գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը ,այլև դպրոցականների այնպիսի մտածողական գորընթացների զարգացմանը, ինչպիսիք են՝

- դասակարգումը,
- ամփոփումը,
- տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,
- իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,

- միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,
- տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,
- ինքնաստուգումը և այլն:

Գործնական աշխատանքների արդյունավետ իրականացումը կախված է մտածողության այս գործընթացների ճշգրիտ կազմակերպումից:

Անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:
2. Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:
3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը:
4. Գործնական աշխասանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:

5.Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:

6.Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:

7. Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:

8. Գործնական աշխատանքը պետք է ապահովվի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը:

9.Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովվեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

2-4-րդ դասարաններում, բացի ուսուցանող նպատակով տրված գործնական աշխատանքներից, տրվում են նաև միավորային գնահատմամբ գործնական աշխատաքներ: Այդ գործնական աշխատանքների գնահատումն իրականացվում է 10 միավորային գնահատանիշերով՝ ըստ տրված չափանիշների:

Հետազոտություն և նախագիծ

Հետազոտական գործունեության ընթացքում երեխան սովորում է դիտարկել, խորհել, համեմատել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ, վերականգնել պատճառահետևանքային կապը և այլն:

Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում երեխաները պետք է կիրառեն տարբեր հնարներ և մեթոդներ:

Տարրական դասարաններում համարյա բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ. թեմատիկան որոշում է ուսուցիչը, բայց յուրաքանչյուր աշակերտ իր ավանդն է ներդնում ընդհանուր գործի մեջ: Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից:

4-րդ դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման: Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի նրանց ճիշտ ընտրության հարցում՝ առաջարկելով մտածել հետևյալ հարցերի շուրջ.

. Ի՞նչն է ինձ հետաքրքրում ամենից շատ:

. Ինչո՞վ եմ ես ուզում զբաղվել առաջին հերթին:

. Ինչո՞վ եմ ես զբաղվում ազատ ժամերին:

. Ինչի՞ մասին կուզենայի իմանալ:

. Ինչո՞վ կարող եմ ես հպարտանալ և այլն:

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են՝

. ըստ աշակերտների քանակի՝ անհատական, զույգով, խմբային,

. ըստ անցկացման վայրի՝ դասարանական ,արտադասարանական,

. ըստ ժամանակի՝ երկարատև, կարճատև,

. ըստ թեմայի՝ առարկայական և ազատ:

Հետազոտական և նախագծային գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով, բնույթով և գործունեության տեսակների բովանդակությամբ: Հետազոտությունը ճշմարտության որոնումն է, իսկ նախագիծը՝ կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծումը: Նախագծային և հետազոտական գործունեությունները, բացի տարբերություններից, ունեն նաև շատ ընդհանրություններ:

Նպատակահարմար է տարրական դասարաններում նախագծային և հետազոտական գործունեությունը միավորել և անցկացնել նախագծային – հետազոտական գործունեություն:

Նախագիծ՝ «Որտեղից են արմատներս»

Թեմայի կարևորության հիմնավորումը: «Որտեղից են արմատներս» թեման ներկա ժամանակաշրջանում ավելի քան արդիական է: Իր ընտանիքի պատմության ուսումնասիրումը շատ կարևոր նշանակություն ունի անձի զարգացման, նրա աշխարհայացքի ձևավորման, անձնային որակների դրսևորման գործում:

Այս նախագիծը ենթադրում է դասարանի յուրաքանչյուր սովորողի ընտանեկան արմատների ուսումնասիրություն: Զարգացնում է սովորողների և նրանց ծնողների ստեղծագործական նախաձեռնությունը, համատեղ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Որոնումների արդյունքնում աշակերտները կսովորեն կազմել իրենց տոհմածառը, կիմանան իրենց ազգանվան և անվան նշանակությունը:

Չափորոշչային պահանջները.

. սեփական ընտանիքի ստեղծման և զարգացման պատմության, ընտանեկան ավանդույթների մասին գիտելիքների յուրացում, «ընտանիք», «ազգ», «նախնի» հասկացությունների իմաստի ըմբռնում,

. ճանաչողական հետաքրքրությունների, ստեղծագործական կարողությունների, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողությունների զարգացում,

. պատմություններից, նկարներից, լուսանկարներից, հարցազրույցներից տեղեկատվության որոնման, ինքնագնահատման կարողությունների յուրացում,

. սեփական մշակույթի պատկանելիության գիտակցման, հայրենասիրության դաստիարակում, դպրոցականի հոգևոր աշխարհի, գեղագիտական փորձի հարստացում:

Նպատակը.

. աշակերտները կսովորեն սիրել իրենց ազգին, ծննդավայրը, հայրենքիը, հարգել և ընդունել ընտանեկան և հասարակական արժեքները, կսովորեն հաղորդակցվել մեծահասակների հետ,

. երեխաները կսովորեն իրականացնել որոնողական աշխատանք, գրառել մեծահասակների հիշողությունները, ճիշտ հարցադրումներ կատարել, զրուցել, աշխատել բառարանով, կիմանան և կշարունակեն ընտանեկան ավանդույթները և այլն,

. կկարողանան գրավոր և բանավոր կապակցված խոսք կառուցել, կկարողանան օգտվել տեղեկատվական աղբյուրներից, կձևավորեն հատուկ ալբոմներ՝ «Իմ

տոհմածառը» թեմայով, կստեղծեն իրենց ընտանիքի տոհմածառը, ծնողների հետ միասին կստեղծեն իրենց ընտանեկան զինանշանը:

Նախապատրաստական փուլում աշակերտներին առաջադրվում է հարցեր, որոնք կուղղորդեն նրանց գործունեության ընթացքում.

1. Ի՞նչ է ազգը:
2. Ու՞մ են անվանում նախնի:
3. Որտեղի՞ց են մեր նախնիները:
4. Ի՞նչ եք հասկանում՝ «ազգական» ասելով:
5. Ի՞նչ գիտեք ձեր ազգականների մասին:
6. Ի՞նչ է ընտանիքը:
7. Գիտե՞ք արդյոք առած- ասացվածքներ ընտանիքի մասին:
8. Ի՞նչ ընտանեկան ավանդույթներ, խորհրդանիշներ կան ձեր ընտանիքում:
9. Ի՞նչ է նշանակում ձեր անունն ու ազգանունը:

Նախագծային գործունեություն ծավալելու փուլերը

Դրդապատճառային փուլ

1.Թեմայի վերաբերյալ սովորողների նախնական գիտելիքների վերհանում հարցաթերթիկի լրացման միջոցով ,անհատական նախագծային գործունեություն ծավալելու նպատակով դրդապատճառների ստեղծում.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարցեր	
1. Գրի՛ր քո ծնողների անունը ,ազգանունը,հայրանունը	
2.Գրի՛ր քո ծնողների մասնագիտությունը	
3.Ի՞նչ ես հասկանում «ազգանուն» ասելով	՝
4>Թվի՛ր քո հարազատներին	
5. Գրի՛ր քո ընտանեկան ավանդույթների մասին	
6. Ո՞վ է քո այն ազգականը, որով դու հպարտանում ես	

2. «Իմ ընտանիքը» թեմայով նկարչական թեստի անցկացում ,որի արդյունքում կարտահայտվի երեխայի վերաբերմունքը ընտանիքի անդամների նկատմամբ:

3.Գրավոր հղում ծնողներին՝ նախագծային աշխատանքի մեջ ընդգրկելու խնդրանքով:

Սիրելի՛ ծնողներ

Մենք՝ երրորդ դասարանի աշակերտներս , սկսում ենք աշխատել «Մեր տոհմածառը» նախագծի շուրջ: Հրավիրում ենք ձեզ մասնակցելու այդ աշխատանքի ն, օգնելու մեզ հավաքել տեղեկություններ մեր նախնիների մասին և ստեղծելու տոհմածառ:

Նախապատրաստական փուլ

1. ուսուցչի օգնությամբ նախագծի խնդրի ձևակերպում,
2. նախագծի թեմայի քննարկում, նպատակի որոշում,
3. նախագծային գործունեության անհատական պլանի կոլեկտիվ կազմում:

Նախագծի իրականացման անհատական պլան

1. Իմ ընտանիքի անդամների անունների գաղտնիքը:
2. Ազգանունը մեր ազգի հպարտությունն է:
3. Իմ ազգի տոհմածառը:
4. Իմ ընտանիքի անդամների մասնագիտությունը:
5. Ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի պարտականությունները:
6. Ընտանիքի ավանդույթները, խորհրդանիշները:
7. Ընտանիքի անդամների հետաքրքրությունները:
8. Իմ ընտանիքի ստեղծման պատմությունը:
9. Իմ ընտանիքի անդամների ծննդյան տարեդարձների օրացույցը:
10. Ընտանիքի մասին առած- ասացվածքների որոնում:

4. Ծանոթացում նախագծի արդյունքների գնահատման չափանիշներին:

Տեղեկատվական- հետազոտական փուլ

1. Ինքնուրույն աշխատանք սեփական ընտանիքի արմատների վերաբերյալ տեղեկատվության որոնում և հավաքում, տոհմածառի կազմում: Տոհմածառի ստեղծման նպատակով տեղեկատվության որոնման համար տրվում է հուշագիր:

Հուշագիր

. ազգականների անունը, ազգանունը, հայրանունը

. ապրած տարիների թիվը

. ծննդյան վայրը, բնակավայրը

. մասնագիտությունը

2. Համատեղ քննարկում ընտանիքի անդամների հետ:
3. Հավաքած նյութերի մշակում և նախագծի ձևավորում:

Նախագծի ներկայացման փուլ

Նախագծի արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ ձևերով.

. զեկուցում- շարադրություն «Իմ ընտանիքը» թեմայով,

. լուսանկարների ալբոմի ներկայացում,որը կուղեկցվի բանավոր բացատրությամբ,

. տոհմածառի ստեղծում,

. «Իմ ընտանիքի խորհրդանիշները» թեմայով թանգարանի ստեղծում,

. խաղ- ցերեկույթ՝ «Իմ երջանիկ, համերաշխ ընտանիքը թեմայով»:

Ամփոփիչ փուլ

. նախագծային գործունեության արդյունքների ամփոփում և գնահատում,

. խմբի յուրաքանչյուր մասնակցի աշխատանքի ինքնագնահատում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները կարելի է անվանել ստեղծագործական –հետազոտական աշխատանքներ:

Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում սովորողների կողմից յուրացված գիտելիքների ,կարողությունների և հմտությունների գործնական կիրառումն է:

Այսպիսով՝ տարրական դասարաններում կիրառվող գործնական աշխատանքները սովորողների մոտ ձևավորում են այնպիսի կարողություններ ու հմտություններ,որոնք վերառարկայական են և նրանց անհրաժեշտ են ամբողջ կյանքի ընթացքում: Սովորողները ձեռք են բերում սոցիալական հմտություններ, իրենց աշխատանքում դիտարկում են տեսականի և գործնականի կապը ,ինքնակազմակերպվում են,ինքնադրսևորվում; Սովորողների համար ուսուցանվող առարկան դառնում է էլ ավելի հետաքրքիր ու կիրառելի:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ.Թորոսյան ,Կ. Չիբուխչյան << Գործնական աշխատանքներ մայրենիից>> Տարրական դասարաններ <<Զանգակ>> հրատարակչություն , 2012 թ.
2. Կ. Թորոսյան , Կ. Չիբուխչյան <<50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար >> մաս 1 , <<Զանգակ >> հրատարակչություն, 2013 թ.
3. <<Նախաշավիղ >> Գիտամեթոդական հանդես 3.2012
4. Նյութեր համացանցից
5. ՈՒսումնական նյութերի փաթեթ